# 779 Ապշած զմայլումով կը կենամ,

1. Ապշած զմայլումով կը կենամ,
Կը նայիմ սիրո օվկիանին,
Անոր ալյաց վրան է լոկ իմ հույս,
Խաղաղություն մը երկնային:

Խաչն կծածկէ յանցանքներս,
Արիւն կը մաքրէ մեղքերս,
Յիսուսի վրան է լոկ իմ յոյսս,
Փափագս է կամքն իմ Աստծոյս:

2. Շատ անգամներ ըրի իզուր ջանք,
Գտնել ազատում իմ հոգւոյս,
Երբ թողուցի պարապ աշխատանք,
Խաղաղութիւն տուաւ Յիսուս:

3. Դպչելով ուսիս Նա կաթոգին,
Ըսաւ ինծի. - «Բժշկվիս»,
Միայն դպայ ես Իր քղանցքին,
Փառքով լեցուեցաւ իմ հոգիս:

4. Մօտ է խաղաղութեան իմ Իշխան,
Դէմքին լոյսէն փայլ կըստանամ,
Մըտիկ ըրէ, քեզի կըսէ Ան,
«Խաղաղութիւն ես քեզ կուտամ»: